

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՆ ԱՐԾԱՐԾՈՂ ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՄՐՅՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ»
ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՅՄԱՆ ՄՐՅՈՒՅԹԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ)
2022 Թ. ՀՈՒԼԻՍԻ 21-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

Նիստը նախագահում էր՝

Արթուր Մարտիրոսյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ),

Մասնակցում էին՝

Վերոնիկա Խորասանյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության պետի պարտականությունները կատարող (հանձնաժողովի անդամ),

Արմենուհի Պետրոսյան - Նախարարություն երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ),

Մարիանա Մինասյան - Նախարարություն երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության ավագ մասնագետ (հանձնաժողովի անդամ):

Անուշ Մխիթարյան - Նախարարություն երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության ավագ մասնագետ (Հանձնաժողովի քարտուղար):

Օրակարգային հարցեր

1. Նիստի օրակարգի քննարկում:
2. Դրամաշնորհային մրցույթի մասին հայտարարության տեքստի քննարկում:
3. Դրամաշնորհային մրցույթի մասին հրավերների տեքստերի քննարկում:
4. Դրամաշնորհային մրցույթի հայտերի գնահատման թերթիկների ձևաչափի քննարկում:
5. Հաջորդ նիստի օրվա, ժամի և վայրի հաստատում:

1) Օրակարգի 1-ին հարց

Վերոնիկա Խորասանյան ներկայացրեց հանաժողովի առաջին նիստի օրակարգի հարցերը:

Օրակարգի 1-ին հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.

Հաստատել հանաժողովի առաջին նիստի օրակարգը:

Կողմ 4, դեմ 0

2) Օրակարգի 2-րդ հարց

Վերոնիկա Խորասանյան ներկայացրեց Դրամաշնորհային մրցույթի մասին հայտարարության տեքստը:

Օրակարգի 2-րդ հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.

Հաստատել Դրամաշնորհային մրցույթի մասին հայտարարության տեքստը (կցվում է):

Կողմ 4, դեմ 0

3) Օրակարգի 3-րդ հարց

Վերոնիկա Խորասանյան ներկայացրեց Դրամաշնորհային մրցույթի մասին հրավերի տեքստերը:

Օրակարգի 3-րդ հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.

Հաստատել Դրամաշնորհային մրցույթի մասին հրավերների տեքստը (կցվում է):

Կողմ 4, դեմ 0

4) Օրակարգի 4-րդ հարց

Վերոնիկա Խորասանյան ներկայացրեց գնահատման թերթիկների ձևաչափի և գնահատման չափանիշները:

Օրակարգի 4-րդ հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.

Հաստատել Դրամաշնորհային մրցույթի հայտերի գնահատման թերթիկների ձևաչափը (կցվում է):

Կողմ 4, դեմ 0


5) Օրակարգի 5-րդ հարց


Հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա, վայրի, ժամի քննարկում:

Օրակարգի 5-րդ հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.


Հանձնաժողովի հաջորդ նիստի օրը սահմանել 2022 թվականի օգոստոսի 8-ը ժամը՝ 12:00, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 6-րդ հարկի 605 աշխատասենյակում՝ հասցե՝ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3:

Կողմ 4, դեմ 0

Արթուր Մարտիրոսյան 

Վերոնիկա Խորասանյան 

Արմենուհի Պետրոսյան 

Մարիանա Մինասյան 

Անուշ Մխիթարյան 